որոշուած էր մեր պաշարները բառնալու համար. խեղճի բեռան վրայ աւելացրին եւ Սալբիին: Հասսի նժոյգը եւ մատակ ձին Մարսի եւ Մարգարիտի մէջ բաժանելով, պառաւ Խաթունը մնում էր առանց երիվարի: Գիւղից գրաստ վարձել անկարելի էր, որովհետեւ գիւղացիներից եւ ոչ մէկը, բացի ծերունի որսորդից, ձիաներ եւ աւանակներ չունէին: Այս խնդիրը վճռեց ինքը Խաթունը. նա ասաց՝ եթէ գրաստ եւս գտնուէր, ինքը դարձեալ ոտով կը գնար, նրա համար, որ ուխտ է դրել եօթն անգամ հետիոտ սուրբ աստուածածին գնալ. վեցը կատարել է, մնում է մէկը: Թէեւ խիստ դժուար էր պառաւի համար երեք օրուայ ճանապարհը անցնել ոտով, բայց նա հաւատացրուց, թէ կը կատարէ առանց նեղացնելու իրան եւ ընկերներին: Մենք մեր կողմից խոստացանք՝ երբեմն վայր իջնել մեր երիվարներից եւ տալ պառաւին, որ նստէ հանգստանալու համար:

Ոչ սակաւ տեւեց վէճը Մարգարիտի եւ Մարսի մէջ. նրանցից իւրաքանչիւրն ուզում էր հեծնել Հասսի նժոյգը. յաղթութիւնը տարաւ, ի հարկէ, Մարսն. մատակ ձին որոշուեցաւ Մարգարիտի համար:

Մարսն ունէր իր փոքրիկ փառասիրութիւնը. նա ուզում էր յայտնուել ուխտաւորների մէջ, նստած գեղեցիկ նժոյգի վրայ, եւ ցոյց տալ Հաղբակայ աղջիկներին, թէ ինքը նրանց երկրի «Միրի» դուստրն է: Տղամարդերի մասին չէր մտածում. նա կամենում էր գրգռել իր ընկերուհիների նախանձը եւ նրանց ուշադրութիւնը գրաւել:

«Միրը» մեծ նշանակութիւն ունէր հասարակութեան մէջ. նա ժողովրդի գլխաւորը եւ ներկայացուցիչն էր, Հաղբակայ հայերի «Միրի» պաշտօնը վարում էր Մարսի հայրը: Ամէնքը կը ճանաչէին նրան, որպէս դուստր այն մարդու, որ հասարակական դրութեան մէջ բռնել էր բարձր տեղ: Այդ պատճառով Մարսն աշխատում էր իր արտաքին փայլը հաւասարեցնել իր հօր կոչման հետ: «Միրի» աղջի՛կ, մեծ բան էր Հաղբակում: Նա ոչ սակաւ հոգ էր տանում եւ իր հագուստի ու պաճուճանքի մասին: Նրա զարդարանքները բաղկանում էին գոյնզգոյն հուլունքներից, քթի եւ ականջների օղերից, մատանիներից, պարանոցի մանեակից, գլխի արախչինից, նախշած ոսկի եւ արծաթի դրամներով, եւ արծաթեայ քամարից: Վերջինը խիստ գեղեցիկ կերպով սազ էր գալիս բարակ մէջքին:

Նա մտածում էր եւ իմ մասին: Երեւի, չէր ուզում, որ ես յայտնուէի ամբոխի մէջ իմ արդէն հնացած հագուստով: Այն օրից, որ ես փախայ տէր Թոդիկի դպրոցեն, ես չէի փոխել իմ հագուստը, որովհետեւ ուրիշը չունէի: Գիշերից բաւական անցել էր, երբ Մարսն, բոլորովին յոգնած, իմ մօտ եկաւ: Նա յայտնեց, թէ ինքը չէ ցանկանում, որ ես երեւնայի ուխտաւորների մէջ հնա-